

ԵՐԲ ԱՅՆ ԿԵՐՊ ԵՆ ՄԵԿՆԱՐԱՆՎՈՒՄ ՓԱՍՏԵՐԸ

Ա. Շ. ՄԵԱՅԱԿԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայ ժողովուրդը միջնադարից ժառանգել է հարուստ մշակույթ, այդ թվում նաև դպրության մեծաքանակ հուշարձաններ, որոնք գտնվում են մասնագետների ուշադրության կենտրոնում: Պետք է նկատել, որ այստեղ առկա են յուրատեսակ դժվարություններ, որոնց հաղթահարել չկարողանալը կամ շրջանցելը կարող է անցանկալի թյուրիմացությունների և մոլորությունների առիթ հանդիսանալ:

Ահա նման դեպքերից մեկի մասին է, որ կամենում ենք խոսել: Նկատի ունենք պրոֆ. Լ. Խաչերյանի՝ Վարդան Արևելցուն (13-րդ դար) նվիրված մի քննությունը¹:

Այստեղ Լ. Խաչերյանը հավաստում է, թե «Վարդան Արևելցին այլևայլ առիթներով անդրադառնում է աշխարհի տարբեր լեզուների առաջացման տեսական կարևոր խնդրին»², զբաղվում «լեզուների առաջացման ու զարգացման տեսության»³, հայտնում է այն միտքը, որ «տեղիտորիալ սահմաններով միմյանցից պատմականորեն անջատված ժողովուրդների լեզուների համակարգային հակադրություններ լինելը գնահատվում է որպես «սքանչելիք»⁴, ցուցաբերում խնդրի «բնապատմական զարգացման ըմբռնում»⁵: Լ. Խաչերյանը փորձում է հավատացնել, թե Վարդան Արևելցին ժողովուրդների ծագման և զարգացման ընթացքը նույնպես համարում է «բնապատմական» զարգացման արդյունք, որովհետև, իբր թե, նրանցից «յուրաքանչյուրն իր համար ստեղծել է սեփական լեզու»⁶ և այլն և այլն:

Իրականում սակայն Լ. Խաչերյանը թյուրիմացաբար աստվածաշնչային դոգմաները, ինչպես նաև դրանց համար հիմք հանդիսացած վաղեմի առասպելներն է դիտել որպես «բնապատմական տեսության» դրույթներ ու հայացքներ:

Ստուգելով փաստերը, տեսնում ենք, որ Վարդան Արևելցին զբաղվել է ոչ թե «աշխարհի տարբեր լեզուների առաջացման տեսական կարևոր խնդրի» քննությամբ, ինչպես հայտարարում է Լ. Խաչերյանը, այլ մի ֆանի առիթով իյուսել է Բաբելոնյան աշտարակաշինության առասպելի մասին, որի համաձայն աստված, զայրանալով այդ նախաձեռնության վրա, մարդկանց զրկում է միեւն յայդ ունեցած ընդհանուր լեզվից և տալիս տարբեր լեզուներ: Հենց այդպես էլ

¹ «Լրաբեր», 1972, № 6, էջ 26—38:

² Նույն տեղում, էջ 28:

³ Նույն տեղում, էջ 26 (խորագիր):

⁴ Նույն տեղում, էջ 28:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

սկսվում է Վարդան Արեւելցու խոսքը. «Լեզուքն որպէ՛ս բաժանեցան աշտարակաշինութեամբն», այսինքն, աշտարակաշինութեան պատճառով լեզուներն ինչպե՛ս բաժանվեցին մարդկանց, Հետեւում է պատասխանը. «Յառաջ կորեաւ և ի վայր անկաւ լեզուն, զոր ունէին, և ամէնն որպէս անբան եղեալ առանձնացան իւրեանց ազգաւն, և ապա սկսան խաւսել ամէն ազգ առանձինն»⁷: Այսինքն, աշտարակաշինութեան պատճառով նախ կորավ նախկին ընդհանուր, միասնական լեզուն, ապա գոյութիւն ունեցած ազգերը (խոսքն Իսրայելի տոհմերի մասին է, որոնք ազգ էին կոչվում), ստանալով նոր լեզուներ, խոսեցին դրանցով:

Այսպես է ասում նաև Աստվածաշունչը: Աստված տեսնելով, որ աշտարակաշինութեամբ զբաղված մարդիկ արհամարհում են իր կամքը, զայրացած ասում է. «Եկայք իջցուք եւ խառնակեացուք անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եւ դադարեցին շինելոյ զբաղաքն և զաշտարակն: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն. զի անդ խառնակեաց տէր Աստուած զլեզուս...»⁸:

Ինչպե՛ս կարելի է Վարդան Արեւելցու վերոհիշյալ տողերի հիման վրա գրել. «Արեւելցին գտնում է, որ միասնական ընդհանուր լեզվի կորստյանը հաջորդել է անլեզվայնութեան (լեզվի բացակայութեան կամ անխոսութեան՝ «անբանութեան») մի ժամանակաշրջան, որի ընթացքում մարդկային միասնական ցեղը աստիճանաբար սկսում է բաժանվել առանձին հասարակական խմբավորումների՝ «ազգերի», որոնցից յուրաքանչյուրն իր համար ստեղծել է սեփական լեզուն»⁹:

Ինչի՞ հիման վրա է Լ. Խաչերյանը Աստվածաշնչի պատմած հրաշքի մեջ տեսնում «մի ժամանակաշրջան», որի ընթացքում մարդկային ցեղը «աստիճանաբար» սկսեց «բաժանվել առանձին հասարակական խմբավորումների՝ «ազգերի», որպեսզի նրանցից յուրաքանչյուրն էլ «իր համար» կարողանար «ստեղծել» սեփական լեզու: Ահա թե ինչպես է Աստվածաշնչային դոգման վերածվում «բնապատմական տեսութեան» ոչ միայն լեզուների ծագման ու զարգացման, այլև ժողովուրդների առաջացման վերաբերյալ: Այս երկրորդ պարագան կկամենայինք հատկապես ընդգծել, որովհետև Լ. Խաչերյանը չնայած դա առանձին հարց չի դարձրել, բայց աշխատել է հետևողականորեն «հիմնավորել»:

Լ. Խաչերյանին, սակայն, այսքանն էլ չի բավարարում: «Բնապատմական տեսութեան» սխեման նրան մղում է գիտական նորանոր կարծիքների վերադրմանը՝ Վարդան Արեւելցուն: Այս անգամ նա դիմում է նրա հետևյալ տողերին. «...Իւրեանք շինաւղքն և իւրեանց ճորտերն և այն ազգն, որ ի յաշխարհն իւրեանց էին, ամէնն առանձինն յատուկ առին խաւսս, և զմիմեանց չկարէին լսել ազգերն»¹⁰: Այսինքն, աշտարակաշինողները՝ իրենց ճորտերով ու ազգերով դեռևս գտնվում էին իրենց աշխարհում, երբ այստեղ էլ ստացան առանձին

7 Զեռ. Ն՝ 2544, թերթ 166բ—167ա:

8 «Սնունդ», ԺԱ, 7—9:

9 «Լրաբեր», 1972, Ն՝ 6, էջ 28:

10 Նույն տեղում (բաղվածքն ընդգրկնակված է սխալներով, օղտվում ենք բնադրից՝ Լեռ. Ն՝ 2544, թերթ 167ա):

լեզուներ և այլևս չկարողացան հասկանալ միմյանց: Դա նորից միանգամայն ներդաշն է Աստվածաշնչի այն առասպելներին, որ հատվածաբար հիշվեցին վերևում: «Միմեանց չկարէին լսել ազգերն» արտահայտությունն էլ նկատի ունի աստծու այն միտքը, թե «խառնակեցուր անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցին իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ»:

Բայց ահա Լ. Խաչերյանը, մեջբերելով Վարդան Արևելցուց՝ վերևում ներշնչված հատվածը («...իւրեանք շինաւղբն...»), դրանք այնպես է ներկայացնում, որ իբր թե այդտեղ Վարդան Արևելցին նկատի ունի «տերիտորիալ սահմաններով միմյանցից պատմականորեն անջատված ժողովուրդների լեզուների համակարգային հակադրություններն»¹¹ տեսական կարևոր խնդիր: Ուշագիտելի է Վարդան Արևելցու տողերի իմաստը: Նրան շփոթեցրել է հատկապես «յաշխարհն իւրեանց» դարձվածքը: Բայց տվյալ հատվածում նկատի է առնված այն աշխարհը, ուր կառուցվում էր աշտարակը և ուր գտնվում էին «շինաւղբն», այսինքն, Բաբելոն-Սենաարը: Այդտեղ էր, որ նրանք, ըստ Աստվածաշնչի, ստացան նոր լեզուներ և սկսեցին խոսել դրանցով: Բայց Լ. Խաչերյանը կամենում է այդտեղ տեսնել ոչ թե Բաբելոն-Սենաարը, այլ աշխարհի տարբեր երկրները, այն էլ «տերիտորիալ սահմաններով միմյանցից պատմականորեն անջատված» և կազմավորված ժողովուրդներով, որոնք էլ, իբր թե, ամեն մեկն իր համար արդեն ստեղծել էր սեփական լեզու:

Լ. Խաչերյանը, անշուշտ, կարող էր խուսափել այդ մոլորություններից, եթե գիտական լրջությամբ հաշվի առներ լեզվաբան Դ. Ջահուկյանի ամփոփ ու կոռեկցիոնականությունը՝ Վարդան Արևելցու համանման տողերի մասին. «Վարդանը,— գրում է նա,— կանգ է առնում Բաբելոնյան աշտարակաշինության առասպելի վրա»¹²: Եվ դա բավական կլիներ, որ Լ. Խաչերյանը այդ և նման այլ փաստերի հիման վրա չփորձեր Վարդան Արևելցուն վերադրել այնպիսի մտքեր, որոնց մասին նա ոչ մի գաղափար չի ունեցել: Ընդհանուր է, նա ևս երբեմն հիշում է Աստվածաշնչում, աշտարակաշինությունը, ժամանակի «տիրող աշխարհայացքը», միջնադարի «լեզվաբանական աղքատիկ տեղեկությունները» և նման այլ իրողություններ՝ կապված Վարդան Արևելցու աշխարհայացքի հետ. սակայն դրանք մնում են որպես սոսկական հայտարարություններ: Մինչդեռ անհրաժեշտ էր հենց այդ միջավայրի ու պատկերացումների հենքի վրա ճշգրտել ու գնահատել Վարդան Արևելցու սեփական մտքերն ու պաշտպանած հայացքները:

Լ. Խաչերյանը Վարդան Արևելցուն գնահատելիս վկայակոչում է նաև հետևյալ տողերը. «...Եւ շատ ինչ բարի եղև. մի՛ զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւն, և դարձեալ՝ զի սլատնառք իմաստից և գեղեցկութեան ի խռոք լեզուէն առաջնոյ և ի կռպտածն՝ փափկագոյն հելլենացւոց և սաստկագոյն հռովմայեցւոց, հոնն՝ սպառնական, ասորին՝ աղաչական, պարսիկն՝ պերճական, և ալանն՝ գեղեցկաձև, գութն՝ ծաղրական, եգիպտացին՝ խարափաձայն, և հնդկին՝ ճճուող. և հայն՝ ևս ամենազարդ և համեղական»¹³: Իրականում այդ

¹¹ «Էրարեր», 1972, № 6, էջ 26:

¹² Գ. Բ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 250:

¹³ «Էրարեր», 1972, № 6, էջ 29—30:

միտքը վարդան Արևելցունը չէ, ուստի և անհիմն են հետևյալ եզրակացությունները. «Կարևոր է դիտել, որ այս տողերում Արևելցին ոչ միայն լեզուների բնապատմական զարգացման տեսակետն է պաշտպանում, որով մի գլխով բարձր է կանգնում միջնադարի մեր բոլոր բերական մեկնիչներից, այլև միաժամանակ տալիս ժողովուրդների լեզուներն է բնութագրում դիպուկ մակդիրներով»¹⁴: Նա միաժամանակ ընթերցողին հուշում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 1267 ձեռագրի 47ր—48ա թերթերում տեսնել քննվող մտքի մեկ այլ ընդօրինակություն: Սակայն ուշիմ ընթերցողն այստեղ (նշված ձեռագրում) կտեսնի, որ աշխարհի լեզուների բնութագրմանը նվիրված հատվածը պատկանում է ոչ թե վարդան Արևելցուն, այլ նրանից շուրջ 800 տարի առաջ ապրած պատմագիր Եղիշին: Ժիշտ է, ընդհանուր երկը վարդան Արևելցունն է, սակայն համապատասխան մտքի դիմաց նշված է նրա իսկական տիրոջ՝ Եղիշի անունը: Այդպիսի շատ ուրիշ քաղվածքներ էլ կան նույն երկի մեջ՝ առնված ազգային և օտար տարբեր հեղինակներից՝ համապատասխան նշումներով: Նույն նշումներին հանդիպում ենք նաև այդ երկի մյուս ընդօրինակություններում: Մնում է մտածել, որ Լ. Խաչերյանը, առանց բավարար չափով ստուգելու վարդան Արևելցու աղբյուրները, նրան «մի գլխով բարձր» է համարել նաև Եղիշից, այսինքն, այն հեղինակից, որին կրկնել և որի մասին բարեխղճորեն նշել է վարդան Արևելցին:

Լ. Խաչերյանը կարող էր այս վիճակից էլ խուսափել, եթե ավելի լավ ծանոթ լիներ մասնագիտական գրականությանը: Այսպես, Գ. Զարբհանյանը դեռևս հարյուր տարի առաջ նշել է. «հատուածները, զոր... առաջ կը բերէ վարդան յանուն Եղիշի»¹⁵, Ե. Տ. Մինասյանի՝ Եղիշին նվիրված էջերում հիշատակված է այդ հարցով հատկապես զբաղվող հայագետի (Լ. Խաչիկյան) անունը¹⁶, Բացի այդ, Մատենադարանի մեկ այլ աշխատակցի՝ Փ. Անթարյանի երկու հոդվածներում կան համապատասխան նշումներ¹⁷: Վերջապես, Լ. Խաչիկյանը դեռևս 1963 թվականին, օգտվելով հենց նույն № 1267 ձեռագրից, նույն հատվածի մասին գրել է. «վարդանանց հերոսամարտի վիպերգու Եղիշին, իր մի անտիպ աշխատության մեջ, փորձում է բնորոշել իր ժամանակի լեզուները՝ վեր հանել նրանց առանձնահատկությունները. «Հույների լեզուն,— դրում է նա,— փափուկ է, հոռմեականը՝ կտրուկ..., իսկ հայինը՝ համեղակա՞ն է. որ սկարէ դամէնն յինքն ամփոփել»¹⁸:

Հիշենք նաև Հ. Տաշյանի հրատարակած հատվածը. «...Փափուկ հելենն, սաստիկ՝ հոռվմայեցիք. սպառնական հոնին...» և այլն¹⁹: Ասենք թե Լ. Խաչերյանը հաշվի չի առել № 1267 ձեռագրի լուսանցագրությունները, համապատասխան երկի խորագրի ու առաջաբանի ցուցումները և հարկ եղած չափով տեղյակ չի եղել մասնագիտական գրականությանը, բայց մի՞թե վարդան Արևելցուն հետազոտողը չպիտի ծանոթանար նույն հեղինակին վերաբերող

¹⁴ Նույն տեղում, էջ 30:

¹⁵ Գ. Զարբհանյան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Կ. Ա, 1865, էջ 242, հմմտ. նաև էջ 593:

¹⁶ «Եղիշի վարդանանց պատմությունը», Երևան, 1946, էջ 92:

¹⁷ «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 365—398, № 8, 1967, էջ 168:

¹⁸ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145:

¹⁹ Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միլիթարեանց ի վիճենա, Վիեննա, 1895, էջ 494:

Մ. էմինի կատարած աշխատանքներին²⁰, Այստեղից նա առնվազն կիմանար, որ Վարդանից բացի, նույն միտքը կրկնել է նաև Մխիթար Այրիվանեցին («...Հեղինակ փափկական և հոռվմեյացին սաստկական, հոնն սպառնական...»²¹)։ Ավելին, նա Մ. էմինի ցուցումով նույն տեղում կտեսներ, որ «ի տանն Ներսիսյան» եղած զրույցները կապվում են Մար Արամ Կատինայի և Մովսես Խորենացու անունների հետ, մատնացույց անելով Բարեկոնյան առասպելի վաղնջական ակունքները։

Ինչ խոսք, անհարկի կլինեի նման պահանջկոտություն ցուցաբերել հարցով հատկապես չգրադվող մասնագետների նկատմամբ, բայց երբ գործ ունենք այդ խնդրով առանձնապես զբաղվող լեզվաբանի հետ, ինքնին ստիպված ենք հիշել գիտության այս պահանջը։

Լ. Խաչերյանը, սակայն, շարունակում է. «Արևելցին պնդում է, որ եթե գույների խալտարողությունը գեղեցկություն է ծնում, ապա լեզուների բազմազանությունը նույնպես գեղեցկություն է ինքնին»²²։ Այս և այլ մտքերի համադրումով է նա գրել, թե Վարդան Արևելցին «լեզուների զարգացման և կատարելագործման՝ գեղեցկացման բնապատմական տեսության անվերապահ ջատագով է»²³։ Սրա համար Լ. Խաչերյանը որպես ապացույց բերում է Վարդան Արևելցուն վերագրած նաև այս տողերը. «Եւ որպէս սզգի ազգի գոյն գեղեցկութիւն առնեն և զանազանութիւն և հասակաց, այսպէս և լեզուաց գեղեցկութիւն»²⁴։ Այս տողերն էլ արժանի են հատուկ ուշադրության, ինչպես որ նկատվել է այլոց կողմից, բայց ամենից առաջ՝ իրենց իսկական հեղինակի անվան տակ։ Իսկ ո՞վ է այս մտքի հեղինակը։ Նորից Եղիշեն. այստեղ սակայն այն առավել լիարժեք է ու ամբողջական։ Լսենք նրան. «Եւ որպէս գոյն առ դունով պայծառանայ, և դէմք ի դիմաց և հասակ առ հասակ և արունստ առ արունստ և գործ առ գործով, նոյնպէս և լեզու լեզուաւ գեղեցկանա, պիտանացու առ ստուգարանութիւն, և որ կարի խաղտաղուր լեզուն է՝ օգուտ գտանի։ Եւ այս գործ աստուծոյ է»²⁵։ Խնդիրն այստեղ ոչ թե լոկ հեղինակության հարցն է, այլև, ամենից առաջ, ժամանակի։ Ինչո՞ւ 5-րդ դարում հայտնված միտքը, որ դարեր շարունակ յուրացվել է սերունդների կողմից, կտրել իր պատմական դերի շուրջ 800-ամյա պատմությունից, բերել 13-րդ դարի սահմանները։

Խոսելով ժամանակ հասկացության մասին, չենք կարող չնկատել, որ Լ. Խաչերյանը Վարդան Արևելցու անունից մեկնաբանելով նախաաստվածաշնչային և աստվածաշնչային առասպելների հետ կապվող մտքերը, ինչպես նաև 5-րդ դարի հեղինակ Եղիշեի դատողությունները, փորձում է համոզել, թե դրանք արդյունք են Վարդան Արևելցու ապրած «դարաշրջանի տիրող աշխարհայացքի»²⁶։

Այս ընդհանուր հենքի վրա առավել ցցուն է դառնում Լ. Խաչերյանի լռությունը այն մտքերի նկատմամբ, որոնցից մեկի համաձայն Վարդան Արևել-

20 «Всеобщая история Вардана Великого», М., 1861, Примечания. էջ 37—38։

21 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 29։

22 «Լրաբեր», 1972, № 6, էջ 30։

23 Նույն տեղում, էջ 29։

24 Նույն տեղում, էջ 30։

25 Ձեռ. Մ 1267, Թերթ 48ա։

26 «Լրաբեր», 1972, № 6, էջ 28։

յին ևս համոզված է, թե մարդկությունը ի վերջո «զլեզուս հրեշտակաց առնու»²⁷։ «Քննապատմական» ո՞ր տեսությունն է պատկանում կրոնական այս ըմբռնումը։ Դժվարանում ենք ասել՝ չէ՞։ Խաչերյանն անգիտանալով, թե՞ գիտակցաբար է շրջանցել նման տեղերը։

Լ. Խաչերյանի նույն հոգևածում առկա են նաև ուրիշ թերություններ։ Դրանց բոլորի վրա ծանրանալն ավելորդ համարելով, կկամենայինք ուշադրություն հրավիրել մի փաստի վրա։ Վարդան Արևելցին, խոսելով գրի և դպրության մասին, օգտվում է Հովսեփոս Փլաբիոսից և իրեն հատուկ բարեխղճությամբ նշում այդ մասին։ Պարզ է, որ այդ հարցը քննելիս, Լ. Խաչերյանը պիտի ծանոթանար Փլաբիոսի համապատասխան մտքերին և հաշվի առներ դրանք՝ Վարդան Արևելցուն գնահատելիս։ Սակայն Փլաբիոսի մասին դիտական տեղեկություններ և համապատասխան աղբյուր ցույց տալու համար նա ոչ մի հղում չի կատարում, բացի մի հնացած և անբավարար բառարանից²⁸։ Վարդան Արևելցու օգտագործած աղբյուրներին ծանոթանալով, մնում ենք զարմացած, թե ինչպես Լ. Խաչերյանն այս անգամ էլ Փլաբիոսի մտքերի համար է փառաբանում Վարդան Արևելցուն։ Խոսքը վերաբերում է Ծնովսի հետ կապվող առասպելին, որի համաձայն նա, վախենալով ջրհեղեղից և հրդեհից, թողնում է արձանագրություններ՝ համապատասխան տեղեկություններով։ Եվ ահա Լ. Խաչերյանը կարծելով, թե Փլաբիոսը այդ առասպելը հիշելիս՝ չի խոսում նշված արձանագրությունների նշանակության մասին, դիմում է այսպիսի հարցադրման։ «Ինչո՞ւ Ծնովսը ընտրել է հատկապես սղեմն և կալն սյունները»²⁹։ Եվ հենց այստեղից էլ նա սկսում է Վարդան Արևելցու՝ իր անհարկի «մեծարումը», չիմանալով, որ ինչ ասել է վերջինս, այն կա Փլաբիոսի մատյանում։ Լ. Խաչերյանը մեջ է բերում Վարդան Արևելցու մոտ գտնվող հետևյալ տողերը. «Ասէ, թէ ջրով անցի (աշխարհս — Լ. Խ.), մնայ պղինձս. և թէ հրով՝ հալի պղինձս և մնայ(յ) թրծեալ կաւս...»³⁰։

Զեռագրերից փոքր-ինչ հմտությամբ օգտվողը նախ պիտի ուշադրություն դարձներ այս քաղվածքի առաջին բառի վրա՝ «Ասէ»։ Ո՞վ ասե. ահա առաջին հարցը, որովհետև Վարդան Արևելցին իր սեփական միտքն արտահայտելիս չէր գրի, թե «Ասէ»։ Դա ցույց է տալիս, որ նա նկատի ունի մի ուրիշ հեղինակի, որն «Ասէ...»։ Ապա՝ նա պիտի այդ միտքը որոներ Փլաբիոսի մոտ։ Գոնե նման բացահայտ նշումի դեպքում պետք էր տարբերել հեղինակի խոսքը նրա մեջբերումից։ Այժմ փորձենք այս իրողությունը ցույց տալ Փլաբիոսի համապատասխան երկի մեր Մատենադարանում գտնվող ուշ միջնադարյան թարգմանության օգնությամբ։ Այդտեղ հեղինակը, խոսելով Ծնովսի հետ առնչվող վերոհիշյալ արձանագրությունների մասին, բացատրում է նաև նրանց ստեղծման նպատակն ու նշանակությունը. «Եւ զի՝ մի՛ կորուսցեն մարդիկ զոր գտեալ էին, կամ թէ պակասիցէր, զոր նոքա ճանաչեալ էին, որոց Ադամ նախ ասացեալն էր, նախագուշակ լինէին զգալստենէ երկուց պատժոց։ Նախ զի հուրն բռնանալոց էր և երկրորդ՝ ջուրն հեղձուցանելոց։ Վասնորոյ կանգնեցին երկուս արձանք. զմինն ի յաղիւսոյ, իսկ միւսն ի քարէ և գրեցին ի վերայ այնց զգտեալ

27 «Մեծիկն Վարդանայ վարդապետի Բարձրաբերդցոյ Պատմութիւն-Տիեզերական», Մոսկվա, 1961, էջ 19։

28 «Լրարեր», 1972, № 6, էջ 31, ծանոթադր. 18։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում։

գիտութիւնն, Եւ առ այս վախճան արարին, զի եթէ արձանն աղիւսոյ յանձրեաց եղծեալ երեկոցէր՝ արձանն քարեայ տեւելով ըստ ժամանակին մարդկան ցուցցէ զգիրսն...»³¹:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ այն ամենը, ինչ բարեխիղճ նշումով առկա է Վարդանի մոտ, դեռևս 1-ին դարում ասել է հրեա մատենագիր Փլաբիոսը: Ասվածից պարզ է դառնում, թե ինչ արժեք ունի ի. Խաչերյանի՝ Փլաբիոսի մտքերի համար Վարդան Արևելցուն տված հետևյալ գնահատականը. «...ինչո՞ւ Ենովսը ընտրել է հատկապես այդնձն և կալի սյունները: Եվ ահա այս ավանդույթի իմաստը ըստ հայտնի է նրան տրված պատասխանում (խոսքը Վարդան Արևելցուն վերագրված «Ասէ» բառով սկսվող տողերի մասին է — Ա. Մ.), որ վերաբերվում է զրի միջոցով հավերժության ձգտելու մարդու մտահոգությանը. անկախ նրանից, որ աշխարհը կկործանվի հրի՞, թե՞ ջրի միջոցով՝ գրառման շնորհիվ անցյալի եղելությունները պետք է լուս վկաներ լինեն մարդկությանն ապրած նախնիքաց դարաշրջանների. որոնք, իրենց հերթին, նրա կենսավորման և աշխարհաճանաչողության վիթխարի ընդարձակման համար հիմք և նախադրյալ պետք է հանդիսանան: Իր այս հետևությունը նա (իմա՝ Վարդան Արևելցին — Ա. Մ.) հիմնավորում է այսպես. աշխարհը հրով կործանվելու դեպքում Լթե պղինձը հալվում է, ապա կավը հրակայուն լինելով դիմակայում է, հետևաբար և փրկվում է երևույթների անվանակոչումը. իսկ ջրհեղեղով կործանվելու դեպքում եթե կավը քայքայվում է, ապա պղինձը անեղծ է մնում և պահպանում հավերժապես արարածների անվանակոչումը որպես մեծագույն առհավալյա մարդկային առաջին լեզվի երբեմնի գոյության... Ահա այս նկատառումներից ելնելով էլ, ասում է Արևելցին, Ենովսը կանգնեցնում է պղնձն և կավն երկու սյուններ. «Ասէ, թէ ջրով անցնի...»³² և այլն:

Ցավով պիտի նկատել, որ քննարկվող փոքրիկ հոդվածում առկա անհոգությունն ու աղավաղումները իրենց հարազատ երկվորյակներն ունեն նաև ի. Խաչերյանի՝ Եսայի Նչեցուն նվիրած աշխատանքում: Բերենք մի օրինակ: Հիշենք «Յաղագս Տիգրանայ» պոեմի այն հազվագեղ բեկորի խաթարված վիճակը, որն ստեղծվել է նրա «գիտական, ուստի և քննական» «երկաստիճան և եռաստիճան փուլով իրականացվող», «անձնական պատասխանատվությամբ», ինչպես նաև «խստագույն զգուշավորություն ցուցաբերելու» հետևանքով³³: Այդ բեկորը, որ այնքան հաճախ տպագրվել է Ղ. Ալիշանից մինչև մեր օրերը, առաջին անգամ անհասկանալի է դարձել ի. Խաչերյանի հրատարակության մեջ³⁴: Նա պարտավոր էր գտնել ծանոթ լինել Ն. Ադոնցի և Գ. Զահուկյանի

³¹ Ձեռ. Մ. 2720, թերթ 10ա (նաև ձեռ. Մ. 2747): Նկատելի է մասնակի տարբերություն կոթողների նյութական առումով:

³² «Լրաբեր», 1972, Մ. 6, էջ 31:

³³ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ՝ ի. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 46, 49:

³⁴ Ահա այդ բեկորի՝ Ղ. Ալիշանի հրատարակած («Բազմավէպ», 1950, էջ 345) և Մ. Արեղյանի վերահրատարակած («Երկեր», Ա., 1966, էջ 104) օրինակը՝ պատշաճ տողատմամբ.

Եւ արդ ներգործող ի միտս երևիւր առ խորհուրդս փողարին

Մեծոգոյ Տիգրանայ դեղանին Տիգրանուհի,

Իւր ներգործեալ զկողարաղն, նաև ողջամիտ աշխարհածուհի:

Ահա և այս կանոնավոր տողերի վիճակը՝ ի. Խաչերյանի կազմած ընագրի համապատասխան պարբերության մեջ. «... և այսպիսի տաղ ասի Երաւմեան քերդութիւն յաղագս Տիգ-

քննած բերականական այն աշխատություններին, որոնց ուղորտից դուրս ծնայի նշեցուն հասկանալ չի կարելի: Մի՞թե իսկապես հեղինակը ծանոթ չի եղել միջնադարյան այն բերականներին, որոնց երկերի շնորհիվ է փրկվել այդ մասունքը:

Վերջում կկամենայինք հիշեցնել, որ Վարդան Արևելցին մեր միջնադարի անվանի մատենագիրներից մեկն է՝ սիրված և գնահատված թե իր ժամանակակիցների կողմից և թե՝ հայագետների: Եվ եթե նրան անհարմար վիճակի մեջ ենք գտնում և. հաշերյանի մեկնաբանություններում, ապա դա՝ ո՛չ իր մեղքով:

КОГДА ИНАЧЕ ИСТОЛКОВЫВАЮТСЯ ФАКТЫ

А. Ш. МНАЦАКАНЯН

Доктор исторических наук

Р е з ю м е

Доктор филологических наук Л. Г. Хачерян в статье «Теория происхождения языков и социальное значение письменности и литературы Вардана Арелелци», смешивая понятие происхождения и естественно-исторического развития языков с библейскими догмами, приписывает известному армянскому средневековому автору Вардану Арелелци такие мысли и воззрения, которых он на самом деле не высказывал. Л. Г. Хачерян допустил и иную ошибку, отнеся мысли других авторов (Египсе, Иосиф Флавий) опять-таки Вардану Арелелци.

բանայ», յորժամ յարմարական բառիւք և ուղորակաւք ի սկզբանէ տաղին մինչև ցկատարումն զմիտս և զշափ առ հասարակ արարեալ բերիցէ, որպէս յորժամ ասէ՝ «Եւ արդ այս ներգործաւդ ի միտս երևիւր առ խորհուրդս փողարին»:

«Մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի,

Իւր ներածեալ զկողարաղ, նաև ողջամիտ, աշխարհածուհի»:

(Ե ս ա յ ի ն շ ե ց ի, էջ 73):